

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ամերիկացի մի նոր մարգարե. — Ներկայումս Ամերիկայում մեծ ժողովրդականութիւն է վայելում շատանդացի Գօուի, որ իրան եղիա մարգարէ է անուանում. նա եկել է Փրիչի մօտակայ դպրատեան մասին մարգկանց իմաց տալու: Գօուին հարիւր հազարից աւելի հետևողներ ունի՝ ո՛չ միայն Միացեալ Նահանգներում, այլ և երկրազնտիս ամենահեռաւոր վայրերում: Առաջ Գօուին հասարակ բողոքական քահանայ էր և ապրում էր Աւստրալիայում. հէնց այդ ժամանակուանից ընդհանուրի ուշադրութիւնն էր գրաւում իւր կրակոտ քարոզներով և կենցաղավարութեան խտուրտեամբ: Առաջին անգամ նա հանդէս եկաւ քարոզելու և ապացուցանելու բժշկականութեան անօգտակարութիւնը, համարելով այն սատանայական խաբէութիւն: Նա հիմնեց «Աստուծով բժշկուողների միութիւն» անուան ներքոյ մի ընկերութիւն, որի անգամները պարտաւոր են երեք բժշկական օգնութեան չղիմել, այլ դրա փոխարէն հէնց իրան, Գօուին էին դիմում, որ և աղօթքով օգնում էր: Նրա հռչակը աւելի և աւելի հեռու տարածուեցաւ, հետևողների թիւը օրէցօր շատանում էր, որի հետ միասին նրանց հոգևոր գլխի կարողութիւնն էլ մեծացաւ. Գօուին ստանում էր իւր հետևողներից նրանց եկամուտի $\frac{1}{10}$ մասը: Ամերիկայի մարգարէն իսկապէս նոր բան չի քարոզում. նա միայն ժողովրդին հրաւէր է կարգում խելքի դալ, խմելուց և ծխելուց հրաժարուել, թատրոններ չյաճախել և, որ գլխաւորն է՝ թողնել սատանայական միջոցները, որոնցով բժիշկները նրանց խաբում են: Այսպիսի խոտակեաց կեանք վարելով՝ նրա հետևողները ամենայն յօժարութեամբ իրանց եկամուտների տասանորդը դոնում են յօգուտ իրանց «մարգարէի»: Ուրիշ շատ մարգարէների նման Գօուին հիմնեց իւր «Սիոնը» Զիկագօի շրջակայքում. այստեղ շինուած են մի քանի գործարաններ, կայ հոգևոր ուսումնարան, դրամարկղ, հրատարակում են լրագիրներ և ամսաթերթեր: Նոր եղիան այժմ հարուստ է և կարող է մրցել Ամերիկայի միլիարդատէրերի հետ: Նրա աղօթքները, դրամաֆօնի ձողիկների վրայ տպուած, տարածւում են ամբողջ աշխարհում. յաճախ նա մի ուրիշ քաղաքում ապրող հիւանդին հրամայում է հեռախօսով իւր աղօթքները լսել և ապապրատի առաջ աղօթել: Հիւանդ-

ների, կայրերի, կաղերի բազմաթիւ խմբեր դիմում են նոր «Սին»-ը, և թէպէտ շատ քչերն են առողջանում, բայց և այնպէս նոր եղիպի փառքն ու ժողովրդականութիւնը ամենեւին չի պակասում: Մարդու հաւատարմը չի դալիս, որ ողջամիտ, դործունեայ և զգաստ եանկիւների մէջ այս տեսակ թեթեւութիւ համայնքներ են կազմուում:

Կանադայի դուխաբորները.—Ռուսաստանից Կանադա դադարած դուխաբորների մէջ վերջին ժամանակներս նկատուում է մի նոր հոսանք, որ կրօնական ոգեւորութիւնից է ծագել: Շատ դուխաբորներ այն համոզման են եկել, որ մեղք է կաթնեղէնով կերակրուել, որովհետեւ չի կարելի հորթերի կաթը խելի ուտել այդ դուխաբորներն սկսեցին միմիայն բուսեղէն կերակուրներ ուտել: Մի քանիսն աւելի հեռու գնացին և այն համոզման եկան, որ մեղք է բնական կենդանիների ծառայութիւններից օգտուել. այդ պատճառով էլ արձակեցին բոլոր ձիերը, կովերը և ուրիշ կենդանիներ: Կանադայի իշխանութիւնները ստիպուած եղան ազատութիւն ստացած կենդանիները հաւաքել, հրապարակական աճուրդով վաճառել և ստացած փողը անասունների տէրերին յանձնել:

Դուխաբորները չհամակերպելով Կանադայում տիրող օրէնքներին, կամենում են այնտեղից էլ ուրիշ երկիրներ դադարել, ուտել և ճանկաց սուլթանին հետեւեալ բովանդակութեամբ խնդիր են ուղարկում:

«26-րդ Մեծութիւն. նախ քան 26ր բարեփոխութեան դիմելը, հարկաւոր ենք համարում մեր մասին 26դ մի քանի խօսք տալ: 1898—1899 թւերին մենք 7000 հոգւով տեղափոխուեցանք Ռուսաստանից Կանադա: Կանադայի մասին լսել էինք, որ այնտեղ կրօնի ազատութիւն է տիրում. բայց մեր սպասածը չկրականացաւ. ճիշտ է, Կանադայում կրօնի ազատութիւն կայ, բայց ոչ այնպիսին, ինչպիսին մենք էինք սրտնում... Մեր յայտնելը, թէ Կանադայում մեզ իրաւունք կտան մեր կրօնի համեմատ ապրելու, ի դերեւ ելան, և թէպէտ մեզ զինուորական ծառայութիւնից ազատեցին, բայց մնացած բոլոր բաներում պահանջում են, որ մենք Մեծ Բրիտանիայի հպատակներ դառնանք և ոչ թէ Աստուծոյ: Բնակուելու համար մեզ չեն ուզում հող տալ, եթէ չխոստանանք Կանադայի բոլոր կանոններին և օրէնքներին ենթարկուել: Բայց մենք վիայում ենք Աստուծոյ առաջ, որ անկարող ենք այդ քայլն անել: Եւ ահա այժմ դի-

մում ենք Ձերդ Մեծութեան բարեսրտութեան և խնդրում ենք Ձեզ, ոչ թէ միայն իբրև թաղաւորի, այլ աւելի իբրև մարդու, որ մեզ և մեր ընտանիքներին մի ողորմութիւն անէք: Մենք իբրև Աստուծոյ պանդուխտներ այս երկրի վրայ, խնդրում ենք Ձեզ հիւրընկալել և պատսպարել մեզ Ձեր ընդարձակ հայրութեան մէջ: Աւելացնում ենք նաև, որ մենք ոչ մտէ և ոչ հախճաղէն կերակուրներ ենք ուտում, այլ միայն ուտում ենք բանջարեղէններ և պտուղներ: Բոլոր կենդանի արարածների ազատութեանը ամենեւին չգիպչելով, մենք ոչ միայն հեռու ենք մարդկանց վրայ բռնութիւն գործ դնելուց, այլ և կենդանիների, ուստի և ոչ մի ընտանի կենդանի չենք պահում, այլ բոլոր աշխատանքները մեր սեփական ձեռքերով ենք անում: Աւստի խնդրում ենք Ձերդ Մեծութիւնից այնքան հոգ, որքան առանց ընտանի կենդանիների կարող ենք մշակել, և այնպիսի հոգ, որի վրայ բանջարեղէններ հարողանային բուսցնել և այգիներ անկել մեր սննդեան համար: Աստուծուց խնդրում ենք, որ նա Ձեր սիրտը կարեկցութեամբ լցնի դէպի մեզ. իսկ մենք մեր կողմից վկայում ենք Աստուծոյ առաջ, որ մեր խնդիրը նիւթական գծով հաշիւների վրայ հիմնուած չէ, այլ միայն բղխում է Աստուծուն հաւատարիմ լինելու ցանկութիւնից»:

Կործանուած քաղաք.—Դեկտեմբերի 3-ին երկրաշարժին զոհ գնաց Թուրքեստանի Անդիթան քաղաքը: Համարեա ամբողջ քաղաքը կործանուած է. Անդիթանում և նրա շրջակայքում աւերուած են 15,000 տուն, մինչև դեկտեմբերի 7-ը գտնուած են 4,600 դիակ:

Անդիթանը Ֆերգանեան շրջանի դաւառական քաղաք է, գտնւում է 1500 ոտն. ծովի մակերեսից բարձր: Սիր—Դաւրիայի Կարա—Դարիա վտակը քաղաքից 3 վերստ հեռաւորութեամբ է հոսում, որտեղից մի ջրանցք է անցկացրած մինչև քաղաքը: Անդիթանից 50 վերստ հեռաւորութեան վրայ բարձրանում են Գուգարթեան լեռները, որոնք նշանաւոր են հանքային տաք և ցուրտ ջրերով: Քաղաքի ընտանիքների թիւը հասնում է 46,680, որից ռուսները 631 հոգի են: Անդիթանը նշանաւոր շինութիւններով կամ վայրերով յայտնի չէ. նա նման է Թուրքեստանի միւս քաղաքներին, սովորական կաւէ շինութիւններով և ասիական կեդոտութեամբ:

Անդիթանի դաւառը Ֆերգանեան շրջանի ամենահարուստ դաւառներից մէկն է. բամբակի ամենալաւ ցանքերն այստեղ

են դանւում, որ և աշխատասէր բնիկների առաջնակարգ եկամուտն է կազմում:

Բնակիչները թուրքական ցեղեր են, զեղեցիկ և քաջ ժողովուրդ, չափազանց կրօնամոլ. առաջուայ դէպի ռուսները տածած մուսուլմանութեանը վերջերս տեղի է տալիս հաւատարմական զգացումների, գլխաւորապէս շնորհիւ այն հանգամանքի, որ ռուսաց անբաւականութեան հոլանու տակ ազգաբնակչութիւնը ազատութեամբ պտրապում է երկրագործութեամբ և քաղաքակրթութեան ճանապարհով առաջ գնում:

Մի ժամանակ Անդրիժանը Ֆերդանի մայրաքաղաքն է եղել. զոնէ 1494 թուին սուլթան Բարուրը այստեղ էր նստում: Կօկանդի խանութիւնը նուաճելիս ռուսաց զօրքերը Անդրիժանի մօտ մեծ ընդդիմադրութեան հանդիպեցան և միայն արևմտահեղ կռուից յետոյ 1875 թ. հոկտեմբերի 1-ին քաղաքն առնուեցաւ:

1898 թւին ապստամբութիւն ծագեց Անդրիժանում, որի ժամանակ թուրքմէները, իրանց գլուխն ունենալով Իշանլին, յարձակուեցան բերդապահ քնած զօրքի վրայ, 22 զինւոր սպանեցին և 20 հոգու էլ վիրաւորեցին: Այս յանդգնութեան համար ապստամբները քաղաքի ռուսաց թաղում գլխատուեցան:

Ինչպէս Ֆերդանեան, այնպէս էլ Սեմիրեչեան շրջանները մինչև հիմա էլ կրում են երբեմն տեղի ունեցած երկրաբանական յեղաշրջումների հետքերը: Հրաբխային գործունէութիւնն էլ բաւականին դեր է խաղացել. բայց ամբողջ քաղաքի կործանում պատահած չէր. Անդրիժանը 300 տարուց աւելի անսասան գոյութիւն ունէր. բայց 1902 թուականը յայտնի է իւր աւերիչ գործունէութեամբ, որ երկրագնտին շատ կոշմերում արտայայտուեց: Թուրքեստանում համարեա ամեն տարի դանադան տեղերում գետնի տատանումներ են տեղի ունենում՝ երբեմն աննշան, բայց երբեմն էլ շատ զօրեղ (օր. Վէրնիյ քաղաքում): Բայց այս տարի ստորերկրեայ ոյժերի շարժումը, ըստ երևոյթին, անսովոր չափերի հասաւ և նրա պատճառած աւերումները շատ քաղմաթիւ են:

Երկրաշարժով բռնուած տարածութիւնն Անդրիժանից շատ հեռու է գնում. միևնոյն ժամանակ գետնի տատանումներին արձագանք տրուեցան Ֆերդանեան շրջանի քաղաքներում, Տաշկենտում, Սամարղանդում և մինչև անգամ Բուխարայում: Երկրաշարժով բռնուած ամբողջ շրջանի տարածութիւնն է 1500 քառ. վերստ, որի կենտրոնը գտնւում է Անդրիժանից 6 վերստ հեռու. այստեղ մի ճեղքուած է գոյացել, որտեղից դուրս են

վիժել աւազ, ջուր և ցելս: Գետնի տատանումները դեռ էլի շարունակուում են:

Շատ ռուսներ քաղաքից հեռացան. մնացածները տեղափոխուեցան երկաթուղու կառքերը: Բնիկները կարգի են ընրում իրանց աւերակ տները և առ այժմ պատուարուած են տախտակեայ վրաններում:

Զինւորական նահանգապետի եռանդի և կարգադրութիւնների շնորհիւ բազմաթիւ ժամանակաւոր տնակներ են շինում: Բայի Բարձրագոյն շնորհուած միջոցներից, բազմաթիւ նուէրներ են ստացւում թէ զանազան բարեգործական ընկերութիւնների և թէ մասնաւոր մարդկանց կողմից: Առանձնապէս Կարմիր խաչի ընկերութիւնը արկածեալների օգտին շատ եռանդուն գործունէութիւն է ցոյց տալիս:

Գրքերի քանակութիւնը. — Վիճակագրական տեղեկութիւնների համեմատ Գերմանիայում ամեն տարի 25,000 նոր գիրք է հրատարակուում, Ֆրանսիայում՝ 13,000, Իտալիայում՝ 10,000, Անգլիայում՝ 7000 և այլն: Ներկայումս ամբողջ աշխարհում երեք միլիարդից աւելի գիրք կայ, որից Միացեալ Նահանգներում 700,000,000, Արեւմտեան Նւրոպայում՝ 1800,000,000, Արեւելեան Նւրոպայում՝ 460,000,000. միւս աշխարհամասերում՝ 240,000,000:

Պարբերական մամուլը Ամերիկայում շատ առաջ է գնացել. մենակ Նիւ-Յօրկում օտար լեզուներով 80-ից աւելի լրագիրներ են տպւում՝ գերմաներէն, իտալերէն, ֆրանսերէն, չեխերէն, արաբերէն, հին եբրայեցերէն, սպաներէն, ունգարերէն, շվեդերէն, յունարէն, հայերէն, լեհերէն, կրօտաերէն, ճափոներէն, իրլանդերէն, շաղանդերէն, ֆիններէն և չինարէն: Ճափոնական լրագիրը ձեռքով փորագրւում է լիտօգրաֆիական քարի վրայ և այնպէս տպւում, որովհետեւ ճափոնական տպարան տեղափոխելն ու հաստատելը շատ թանգ կնստէին, ծախսերը չէին ծածկուի, ճափոնացի ընթերցողներ էլ քիչ կան: Ամերիկական օտարազգի մամուլը միշտ լաւ է տրամադրուած դէպի Միացեալ Նահանգների կառավարութիւնը. մանաւանդ այս բանը յայտնի դարձաւ սպանո—ամերիկական պատերազմի ժամանակ: Միացեալ Նահանգներում հրատարակուող ոչ մի սպաներէն լրագիր թշնամական լեզու չէր բանեցնում կառավարութեան և առհասարակ ամերիկացիներին նկատմամբ:

ձափոցիայի յառաջադիմութիւնը, — եւրոպական մամուլը շարունակաբար հաղորդում է այն արտասովոր յառաջադիմութեան մասին, որ վերջին յիսնամեակում ձափոնիան արել է: Նա այժմ հանդէս է գալիս իբրեւ «գալլոցական ուսուցիչ» Ասիայի համար: ձափոնիան այսուհետեւ ահագին դեր կ'իսպառ Սսիայի տէրութիւնները զարթնելու գործում: Նա կստիպի Չինաստանին և Կորէային յառաջադիմութեան շաւղի վրայով ընթանալ. այս գործում կօգնէ նաև Սիամին: Ռուսաստանը տեսնելով ձափոնիայի յառաջադիմութիւնը, ստիպուած պիտի լինի Արեւելեան Սիբիրը աւելի խիտ կերպով բնակեցնել և ծաղկեցնել: ձափոնացի զինւորական սպաները, վաճառականները, առեւտրականներն և ընդհանրապէս կրթուած ձափոնացիք ըստ երևութին առանձին ընդունակութիւններ ունին իրանց ասիացի ցեղակիցների վրայ ազդելու և իրանց ձեռքում պահելու, քան որեւէ ուրիշ ազգութիւն: Հասարակ ձափոնացիին շատ աւելի լաւ է հասկանում սովորական չինացուն, կորէյացուն, սիամցուն, և առհասարակ ասիացուն, քան եւրոպացին և ամերիկացին: ձափոնացիք ցեղակից են ասիացի ուրիշ ժողովուրդներին. նրանց և հարաւային Ասիայի ժողովուրդների մէջ գոյութիւն ունի ցեղային համակրութիւն: ձափոնիայի գրաւոր լեզուն նոյնն է, ինչ որ Չինաստանին և Կորէայինը. այս հանգամանքը շատ է նպաստում այդ ազգերի աւելի սերտ միութեան. Կովկասեան ցեղի ժողովուրդները այդ առաւելութիւնից զուրկ են, ուստի և ձափոնացիք նրանցից աւելի լաւ են ըմբռնում ասիացու աշխարհայեացքը: Բացի սրանից ձափոնիայի առաջ գնալու պատճառներից մէկն էլ հետեւեալն է. եւրոպացիք շատ քան են անում ասիացիների համար, բայց միայն մի պայմանով, — ինչ որ անում են, իրանք էլ շահագործում են. մինչդեռ ձափոնացիք ասիացիներին սովորեցնում են, որ ամէն քան իրանք անեն, ինչպէս ձափոնացիք իրանք արին: Չինաստանում վերջապէս համոզուեցան, որ ձափոնացի սպաներն անհամեմատ աւելի օգտակար են զօրքը կրթելու համար, քան եւրոպացիք: ձափոնացի վաճառականներ, մանաւանդ մանր առեւտրականներ, Չինաստանի ներսը զանազան տեղերում հաստատուում են, որտեղ ոչ մի եւրոպացի վաճառական մքտքովն անգամ չի անցկացնի մտնել: Մանջուրիայում, որ Ռուսաստանի հսկողութեան ներքոյ է գտնւում, ձափոնացի վաճառականների թիւն աւելի է ռուս վաճառականների թուից: Բայց ձափոնիայի գործունէութիւնն ամենից աւելի երևում է Կորէայում. այնտեղ այնպիսի գործակալներ կան, որ ուրիշ ոչ մի

տարադաւք աղղի աղղի տուեալս ի կայսերէ: Աւ հանդի-
պեալ լինի իշխանաց իշխանին ի գաւառին Արշարունեաց՝
ի Զարեհոսանի գեղջ, և կացուցեալ առաջի նորա զընծայսն
յայնքանուոյ ի մեծէ արքայէ, պատմէ միանդամայն և զհրա-
մայեալուն՝ բանս հանձարեզս և ասորոժելիւ: Զոր ընկալեալ
իշխանաց իշխանին գյոզնական պարզեւն՝ զակնախախտս և
զերեւելիս, մեծարէր և դառաբեալ ներքինին, իբրեւ զմտերիմ
սպասաւոր թաղաւորին, վասն զի էր այրն խոհամագոյն և
հանձարեղ և հաւատարիմ: Ի գլխաւորելն իւրում՝ զհրա-
ման արքունի բանիւ իրադործութեամբ, սկիզբն արար պատ-
մել իրս ինչ՝ զարմանալիս և սքանչելիս: Աւնիմ՝ ինչ ասէ
պատմել քոյոյ մեծանձնութեանդ՝ աստուածային իմն հրա-
շագործս ներդործական յայտնութիւնս՝ ոչ ի գրոց նախ իսկ
գծագրելոյ, կամ ի համաւուց ոմանց անդէն եղելոց, այլ
ինձէն եղեալ ականատեսս և ականջալուր նորասքանչ հրա-
շիցն, որում բոլորն այն ծովահայեաց քաղաքն թաղաւորա-
կանս պիտառէ Հռովմայեցւոց նահանգին, սակս հասարա-
կաց գոլով յայտնի ի նմանէ եղեալ ի վերին տեսչութեանցն:
Աւ սկսեալ պատմեաց զեղեալ սքանչելիսն, զոր յաւրինեալ
գրեցին ի մատենի: Առաքէ վաղվաղակի առ ժամանակին
կացեալ վարդապետն հայոց, զոր յետոյ նշանակեցից զանունն:
Իսկ նորա յոյժ ուրախացեալ ընդ աստուածային տեսչու-
թեանցն յայտնութիւնս՝ ըստ արժանի հաւրն զբուսախ
սուղ ինչ յինքենէ բանս գովաստականս մեծի մերոյ Լուսա-
ւորչին, ոչ յինքենէ առաւել(ւ)եալ ի պատմութիւնն, և ոչ
նուաղել յասացելոցն ի ներքինոյն, բայց ի դոյզն ինչ բանից
յորդորակաց, զոր կարգեաց յիսկզբանս պատմութեանցն: Աւ է
այսպէս. — Յերկուց պատուեալ լինի իմաստից խորհուրդք՝ որոց
խոհանն, անձառութիւնն, զպատմութիւնս ինչ իրացն եղելոց
արտադրել գծադրական շարագրութեամբ՝ ոմանք զհնագու-
նիցն և զվաղնջուցն վերծանելով զպատմողական տառս, իսկ
այլք ոմանք զներկայացեալ իրս ճառելով զիրակայութիւնս
նորոգեալ ստուգարանն զպատմութիւնս: Ըստ որում և մեզ
հաստուցանել առաջի կայ ըստ ներկայացեալ բանի զիրակու-
թիւնս հրաշակերտս և քստմնելիս, ոչ ըստ հեթանոսական բա-

տէրութիւն չունի. — դրանք ճափոնացի գաղթականներն են: ճափոնացիք ցրուած են ամբողջ Կորէայում, սկսած Մանջուրիայի սահմաններից մինչև հարաւային հրուանդանը: ճափոնացու գաղութներն ու ճափոնական քաղաքամասերը Կորէայի քաղաքներում միշտ լաւ են կառավարուում, բնակիչների բարեկեցութիւնն էլ ծաղկում է: ճափոնացի բանուորը, հասարակ դուլին, շուտով հաստատուում է Կորէայում, մի կտոր հող է գնում, կամ թէ չէ մի փոքրիկ խանութ է վարձում: Կորէայի բանուորը, տեսնելով այդ, ի հարկէ ինքն էլ ցանկութիւն է յայտնում նոյն կերպ վարուելու և աշխատում է նմանուել ճափոնացի գաղթականին: Յամենայն դէպս անկասկած է, որ ճափոնական իւր գաղութների և գաղթականների շնորհիւ խաղաղ ճանապարհով կարող է Կորէան նուաճել:

ճափոնական առևտրական նաւատորմիղը վերջին տասնամեակում շատ վիթխարի չափով մեծացաւ: Ասիայի ամեն մի ծովի, ամեն մի գետի վրայ այժմ լողում են ճափոնական նաւերը, որոնք երթևեկում են նաև ովկիանոսների վրայ և հասնում Ամերիկա, Եւրոպա և Աւստրալիա: Նրանց նաւերի վրայ տեղափոխուող ապրանքների և ծովագնաց ճանապարհորդները թիւը շարունակ մեծանում է. այս դէպքումն էլ ճափոնեան ուսուցչի դեր է կատարում ասիացի ժողովրդների նկատմամբ, որովհետև իր անձնական օրինակով նրանց ցոյց է տալիս, թէ տեփական ջանքերով ինչ հետեւանքների կարելի է հասնել, և ուղորեցնում է նրանց առանց Եւրոպայի և Ամերիկայի օգնութեան առաջ գնալ:



ՅԱԿԵԼՈՒԱԾ «ԱՐԱՐԱՏԻ» 1902 թ. ՆՈՅ.-ԴԵԿՏ.

Պատմութիւն յաղագս գիւտի նշխարաց սրբոյն Գրիգորի
Հայոց Մեծաց Լուսաւորչի.*

Ի Ժամանակին յօրում հայ թուականն Յիւլէրյ առաքեալ լինի ներքինի ոմն անուն նորա Նիկոմիդոս՝ ի վայելեկայսերէ յունաց, հրեշտակութեամբ աւ Աշոտ իշխանաց իշխան ի Հայս հանդերձ սրատուոյ ընծայիւք և վայելական պա-

* Ձեռագիր ձառնարկը հ. 940. դլ. ձեռն.